ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար

- *ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժինը 2019թ. 1-ին կիսամյակի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների, կարգադրությունների և հրամանների նախագծերի ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխանությունը և տրամադրվել եզրակացություններ.*
- *Ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետին է ներկայացվել համապատասխան առաջարկություններ.*
- *Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 412 որոշում, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հոդվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալուն և ներհամայնքային այլ խնդիրների: Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան:*
- *Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել համապատասխան միջոցառումներ և առաջարկություններ են ներկայացվել Մարզպետին. Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է քսաներկու քաղաքացու դիմումի, որոնցում բարձրացված հարցերը վերաբերվում էին անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետ կապված վեճին և բնակարանի վթարայնության հետ կապված խնդիրների, գույքին պատճառված վնասի փոխհատուցմանը և նման այլ հարցերի: Դիմումներին պատասխանվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից ելնելով:*
- *Իրականացվել է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելություն, տրամադրվել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և համապատասխան տեղեկատվություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների:*

- *Մարզպետարանի ստորաբաժանումների աշխատակիցներին տրվել են պարզաբանումներ՝ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ, տրամադրվել են մեթոդական ցուցումներ.*
- *Իրավական հսկողության շրջանակում իրականացվել է հսկողություն Գլաձորի համայնքապետարանում, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացվել Մարզպետին:*
- *Ուսումնասիրվել են Բաժնին հասցեագրված նամակները, գրությունները, հանձնարարականները, քննարկվել և օրենքով սահմանված ժամկետում ապահովվել է դրանց լուծումը.*
- *Համագործակցել ենք հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:*
- *Նախապատրաստվել են Բաժնի գործունեության հետ առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին.*
- *Ամենամյա տեղեկատվություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:*
- *Մարզի ավագանիների որոշումները տեղադրվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում:*
- *Պատասխանվել են տարբեր պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից ստացված գրություններին, ընթացիկ գրություններին:*

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՄԱՂԱՔՅԱՆ

01.07.2019թ.